

# Ժողովուրդ

176  
(3026)

17 դեկտեմբերի երեքշաբթի 2024  
տպագրության ԺԳ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ +374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՔՐՈՒՄ ԵՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐ ԻՐԵՆՔ ԷԼ ՉԻՍՅԱՌԱՄԿՎԵՆ



Շաբաթ օրը տեղի ունեցած քաղաքական ժողովից հետո ՔՊ-ականների մոտ վախի ու սարսափի մթնոլորտն ավելի է ծանրացել:

Նիկոլ Փաշինյանը տարբեր առիթներով վերջին օրերին հայտարարել է, որ իրենց դռնփակ նիստերից, ժողովներից արտահոսք կազմակերպող արժանախառն է Յուլիա Աղապարյանի ու Յակոբ Ասլանյանի ճակատագրին. ոչ միայն կհեռացվեն, այլև հանրային կերպով կխայտառակվեն:

«Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ական աղբյուրները փոխանցում են, որ քաղաքական «բարկացած» ժողովից հետո իշխանականների շրջանում մի իրարանցում է սկսվել. ՔՊ-ականները ջնջում, մաքրում են իրենց խոսակցությունները, գրագրությունները, չափերը, նկարները, անձնական բնույթի տեղեկությունները, որպեսզի մի գեղեցիկ օր էլ այդ ամենը չհայտնվի վարչության նիստում, եւ իրենք չընկնեն Յուլիա Աղապարյանի օրը:

Բանն այն է, որ ՔՊ-ականներից շատերն իրենց հեռախոսներում ավելի վատ բովանդակություններով խոսակցություններ ու լուսանկարներ ունեն, ու եթե հանկարծ մի օր դրանք հանրայնացվեն, նրանց էլ ոչինչ չի փրկի: Մի կողմից էլ իշխանականների սիրտը չի հանգստանում, քանի որ Նիկոլ Փաշինյանի հրահանգով՝ իրավապահները կարող են անգամ իրենց հին ու ջնջված նամակագրությունները վեր հանել ու որպես կոմպրոմատ օգտագործել իրենց դեմ: Դրա համար էլ ՔՊ-ականները շատ լուռ են. ոչ ոք չի ցանկանում «սխալվել»:


**ՔՊ**-ականները որսի են դուրս եկել. հիմա էլ թիրախում առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն ու շրջակա միջավայրի նախարար Յակոբ Սիմոնյանն են: Դեկտեմբերի 12-ին ՔՊ-ն Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ հերթական ինքնաքննադատության նիստն էր արել: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ական իր աղբյուրներից տեղեկացավ, որ ՔՊ-ականները մի լավ քննադատել են Անահիտ Ավանեսյանին ու Յակոբ Սիմոնյանին: Մասնավորապես, Անահիտ Ավանեսյանին մեղադրել են առողջապահության ոլորտում տիրող բարձրորդի ու խայտառակ վիճակի, քաղաքացիների կողմից հնչող բազմաթիվ դժգոհությունների համար: ՔՊ-ականները կասկածահարույց են համարել միլիոնավոր դրամների պայմանագրերը, որոնք Անահիտ Ավանեսյանը կնքել է նորաբաց «Ուիզմոր» կլինիկայի հետ, ու նրան մեղադրել են կոռուպցիայի մեջ: Ավանեսյանը, իհարկե, փորձել է արդարանալ, սակայն ներկայներին չի համոզել: Յակոբ Սիմոնյանին էլ քննադատել են անգործության համար, ինչպես նաեւ բնապահպանական խայտառակ իրավիճակի եւ անթույլատրելի չափով ծառերի հատման համար: ՔՊ-ականները Նիկոլ Փաշինյանի մոտ նաեւ անկեղծացել են, որ այսուհետեւ, որպեսզի թիմային զգվառողների մասին լուրերը նրան պայտեղ-այտեղից չհասնեն, նիստերի ժամանակ հրապարակավ իրար դեմքի ինչ ունեն՝ ասելու են: Հավելենք նաեւ, որ նախաձեռնող նիստն այնքան թեժ է անցել, որ անգամ ամփոփիչ զեկույցը կիսատ է մնացել՝ նախաձեռնողի հաջորդ նիստին ներկայացնելու պայմանով:



Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանն ու մարզային ոստիկանապետը խոր հակամարտության մեջ են: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ պաշտոնյաների ներքին կռիվը ուղիղ կապ ունի մարզպետի քրեական պատմությունների հետ հնարավոր առևտրություններին: Ուշագրավն այն է, որ մարզպետ Մովսիսյանը օրերս իր հարցազրույցում հրապարակավ կասկածի տակ է դրել իրավապահների գործողությունները: Երեկ, երբ իր խորհրդական Արմեն Մարկոսյանին ոստիկանները թմրանյութի օգտագործման կասկածանքով բերման էին ենթարկել, մարզպետը հայտարարեց, թե վստահ է, որ այս միջադեպը կապված է իր օգնականի ու համայնքային ոստիկանության, ինչպես նաեւ Արագածոտնի մարզային վարչության պետի միջեւ առկա լարված փոխհարաբերությունների հետ: Նշենք, որ Արագածոտնի մարզային վարչության պետը Վարդան Խաչատրյանն է, իսկ ահա Աշտարակի բաժնի պետը՝ Սերգեյ Մարտիրոսյանը, որը երեկ՝ դեպքից հետո, ազատվեց պաշտոնից: Հիշեցնենք, որ Shamshyan.com-ը գրել էր, որ դեկտեմբերի 16-ին Երևան-Գյումրի ավտոճանապարհի Աշտարակ-Ագարակ հատվածում հայտնաբերել են կասկածյալի Mercedes-ը, ինչից հետո վարորդին՝ Ա. Մարկոսյանին, թմրանյութ պահելու, օգտագործելու եւ տարածելու կասկածանքով տեղափոխել են ոստիկանության Աշտարակի բաժին: Վարորդի մոտ հայտնաբերել են խոշոր չափի թմրամիջոց՝ «մարիխուանա» տեսակի: Դեպքի փաստով ոստիկանության Աշտարակի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք, հնարավոր է, փոխանցվեն ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչություն:



Նոյեմբերի 26-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Կառավարությունում հյուրընկալել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Լեհաստանի նախագահ Անժեյ Դուդայի գլխավորած պատվիրակությանը: Այս այցը, կարծես, փոքր-ինչ թանկ է նստել Լեհաստանի նախագահի վրա: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ներկայացրած «Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողների նվերների հաշվառման ձեւաթղթի» համաձայն՝ Նիկոլ Փաշինյանը նոյեմբերի 26-ին Լեհաստանի նախագահ Անժեյ Դուդայի կողմից ստացել է նվեր՝ տղամարդու հագուստի թեւքածալի վրա տեղադրվող ճարմանը՝ 3 գույգ, 925 հարգի արծաթից, քարերով: Քարերը՝ սաթ, օինքս: Ջարդի արժեքը կազմել է 74 հազար 577 դրամ: Տեղեկացնենք, որ եթե նշված օրենքի 1-ին կամ 4-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է 60.000 դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին: Բացի դրանից, հանրային պաշտոն զբաղեցնող անձը եւ հանրային ծառայողը պարտավոր են իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում: 40.000 դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման՝ բացառությամբ նույն աղբյուրից 6 ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (5 եւ ավելի) բնույթ կրող դեպքերի: Նվերների արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է գնահատել բաց աղբյուրների միջոցով:









ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐԶ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ԱՃԻԱՏԵՑՐԵԼ, ԳՈՒՄԱՐԸ ՉԵՆ ՏՎԵԼ

Տավուշի մարզի սահմանամերձ գոտում տասնյակ բանվորներ աշխատել են ռազմական օբյեկտի շինարարությունում...

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԼՈՒԾԱՐՎԵԼ Է

Տարիներ առաջ Նոյեմբերյանի տարածաշրջանում գործում էին ոստիկանության 2 բաժիններ՝ Նոյեմբերյանի և Բագրատաշենի:

ՈՍՎՆ ՍՈՐՈՑՅԱՆ Տավուշ

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՉՄԵՌԱՅԻՆ ԵՎ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐՈՒՆԵՐԸ

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը դեռևս 2023 թ-ին հրաման է ստացրել...

2024-2025 ուսումնական տարվա ուսումնական պարապմունքները հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված և հասուկ) դասական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարաններում սկսվում են 2024 թվականի սեպտեմբերի 2-ին...

Արձակուրդները 2024-2025 ուսումնական տարում՝

- 1) Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2024 թվականի հոկտեմբերի 21-ից 27-ը և ներառյալ, ձմեռային՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ից 2025 թվականի հունվարի 5-ը...



րառյալ, գարնանայինը՝ 2025 թվականի մարտի 17-ից 30-ը ներառյալ: 3) Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2024 թվականի հոկտեմբերի 21-ից 27-ը ներառյալ...

սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների և սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցներում:

ՀԱՄԱ ՄԻՔԱՅՆԵՆԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐԶ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից 33 ջրային օբյեկտների և 33 Կառավարության 07.03.2003թ. N217-Ն և 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է «Մարտունու Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքի վարչական տարածքում խմելու-կենցաղային նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 4,2 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

23-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում: Շրջակա միջավայրի նախարարություն

ՀՈՒՆՎԱՐԻ 6-ԻՆ ԳԱՄ ԿԼԻՆԻ՞

Դեկտեմբեր ամսին համացանցում տարածվեց տեղեկություն, որի համաձայն՝ ուսումնական հաստատությունները հունվարի 6-ին՝ Սուրբ ծննդյան տոնին, իրենց բնականոն աշխատանքին են անցելու, այսինքն՝ աշակերտները գնալու են դասի, իսկ ուսուցիչներն աշխատանքին:

Նշվում են դեկտեմբերի 31-ից հունվարի 2-ը ներառյալ (Ամանոր) և հունվարի 6-ին (Սուրբ Ծնունդ և Զայտնություն), որոնք ոչ աշխատանքային օրեր են: Զանրակրթական ուսումնական հաստատությունները հանդիսանում են պետական ոչ առևտրային կազմակերպություններ և գործում են սույն օրենքի վերոնշյալ դրույթին համապատասխան:

ԱՆՆԱ ՍՐԳՊՈՒՅԱՆ

● Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 39 պատահար. 73 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:







ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ավտոտրանսպորտային բյուրոն ո՞ր դեպքում է հասուցում տուժած անձանց դատառված վնասները:**  
**Հովսեփ Սարգսյան (39 տարեկան)**



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հ. Սարգսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է: Այս դեպքում Բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է միայն տուժած անձանց պատճառված անձնական վնասները:
- Վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:
- Վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ:
- Վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ), եթե նա, օրենքի համաձայն, պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

**Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Նշենք, որ երաշխավորման ֆոնդը գոյանում է Բյուրոյի անդամների կողմից կատարվող միանվագ, պարբերական եւ լրացուցիչ վճարներից, օրենքով սահմանված այլ ձեւերով ներդրված միջոցներից, ինչպես նաեւ այն ակտիվներից, որոնցում ներդրվել են դրանք, եւ դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտներից: Երաշխավորման ֆոնդի միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Բյուրոյին: Դրանք կարող են օգտագործվել բացառապես Երաշխավորման ֆոնդի համար օրենքով սահմանված նպատակներով եւ դեպքերում:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է որոշվում բնակելի սարածության անհասույց օգտագործման իրավունքի՝ դասական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:**  
**Անաստաս Միքայելյան (43 տարեկան)**



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւեալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի



Միայն պատկերացնել կարելի է, թե ինչպիսի գվարձալի նախադեպեր են եղել, մինչեւ որոշել են փակցնել այս գրառումը:

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը  
 Բաժանորդագրվելու  
 համար կարող եք դիմել



«Հայկոստ» ՊՓԲԸ  
 հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ  
 հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդախտաբանաբար ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**  
**հայկական տպագիր մամուլից**


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_  
 Ազգանուն՝ \_\_\_\_\_  
 Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	-5 - 9 -1 + 2	Արարատ	0 - 4 +6 + 8
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 + 1	Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5	Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1	Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Լոռի	-4 - 8 +1 + 4	Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Տավուշ	0 - 4 +3 + 6	Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2	ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 4 + 4 + 7	Երեւան	0 - 2 + 2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝  
 «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23  
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086  
 տրված է 24.11.2010  
 Ստորագրված է տպագրության 16.12.2024  
 Տպաքանակ՝ 3968

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում  
 խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ  
 չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային  
 հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը  
 պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս  
 կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել  
 հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ  
 «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: